Հատկանշականն այն է, որ երբ Շառլը Գոլը ավարտելու էր իր պաշտոնավար-

ներով նրանց: Սակայն ինքն անձամբ զուլաճործեց նախապես ուժեղ համայնավար կուսակցությունը հետևողականորեն վարկարկելու քաղաքականությունը:

Նա, ըստ Ֆրանսիայի նախկին արտգործ նախարար Կլոդ Շյալոնի, ԱՄՆ-ի այն ժամանակ փոխնախագահ Ջորջ Բուշին ասել էր. «Ես կոմունիստական կուսակցությունը կվերադարձնեմ իր իսկական չափերին: Նրանք միանալու են կառավարությանը, ստանձնելով կառավարական աննշան լծակներ: Նրանք կառավարության մեջ կմտնեն նրկար և նրանց

Ընդդիմադիր գուլիտա (դը Գուլի անունով) կուսակցության պատասխանատուներից Ալեն ժյուսե և այսպես է արտահայտվում. «Նրա միակ առավելությունն այն է, որ անցած 10 տարիներին հրաժարվել է իր հայտարարած բոլոր սկզբունքներից»:

Հակառակ այն իրողությանը, որ Ֆրանսիան այնու գործում մասնակցություն չունի ՆԱՏՕ-ի կազմում, սակայն Միտերանը համաձայնվեց ամերիկյան հրթիռների տեղադրմանը Եւրոպայում: 1982 թ. Բրյուսելում արտասահման իր ծառի ընթացքում Միտերանն ասում էր. «Այնքան

ՆԱԿԱԳԱՅ ՖՐԱՆՍՈՒԱ ՄԻՏԵՐԱՆԻ 10 ՏԱՐԻՆԵՐԸ

ազդեցության ուղորտը կիշնի 10 տոկոսի»: Միտերանի նախատեսություններն իրականացան և համայնավարները հետագա ընտրություններին ստացան թվերների 7 տոկոսը:

Այնուհետև, ժողովրդային ընդդիմության դիմաց, սոցիալիստ Միտերանը հրաժարվեց կրթական մարզն ազգայնացնելու գաղափարից:

Պատմաբան Ֆրանսուա Ֆյուրենը գրում է. «Բայլ առ բայլ Միտերանը կառավարում է մի Ֆրանսիա, որ ձախը ճնդափոխական չէ, իսկ կաթոլիկները՝ հակաինդափոխական»:

Սոցիալիստ Միտերանի օրով Ֆրանսիան քունց կապիտալիզմի ուղին, 1981 թ. նա իրատեսցել էր կրճատել անգործների քիվը, սակայն՝ ձախողեց: Այսօր Ֆրանսիայում մեկ միլիոնով ավելի անգործներ կան, քան նախապես, այսինքն՝ նախկին 1,6 միլիոնի փոխարեն՝ ներկայումս 2,6 միլիոն:

Արևմտյան մի դիվանագետի կարծիքով, Միտերանին չի հաջողվել որպես ընկերակցական նախագահ անել այն, ինչ մարդիկ ակնկալում էին իրենից:

ժամանակ, քանի դեռ Արևմուտքում շարժում կա, Արևելքը կպանի իր նրբանցները»:

Ֆրանսիան թիկունք կանգնեց նաև Մոցի պատերազմի ընթացքում, ամերիկացիների կողքին իր զորքերն առաքելով Սաուդյան Արաբիա: Միտերանը սերտ հարաբերություններ չունեց Ռոմալո Ինչիգանի հետ, սակայն մտոխի բարեկամն է Ջորջ Բուշի, որի հետ ամենօրյա խոսակցություններ էր ունենում Մոցի պատերազմի ամբողջ տևողության ընթացքում:

Առայժմ Միտերանը հավանական հաջողի չունի Ֆրանսիայում, իր կուսակցությունից շրջանում: Մյուս կողմից, ընդդիմադիր աշխրը նա միացալ ուժ չեն ներկայացնում: Ինչպես 10 տարի առաջ, նախագահական պոստի համար կարող են հավակնորդ դառնալ նախկին նախագահ Վալերի Ժիսկար դ'Լառենն ու Փարիզի քաղաքագլուխ Ժակ Շիրակը:

Մինչև 1995 թ. շարունակվելու է Միտերանի ժամանակաշրջանը, որին ֆրանսիացիները եթե նախկինում կատակով անվանում էին տոնան (հորնորայր), այժմ կոչում են դիյո (աստված): □



րության 10 տարիները, այն ժամանակ ընդդիմադիր Ֆրանսուա Միտերանը շարունակ վանկարկում էր՝ «քավարար են 10 տարիները»: Շուտով, 4 ամիս հետո, նա ինքն է գերազանցելու դը Գուլին, դառնալով Ֆրանսիայի հինգերորդ հանրապետության ամենից երկար իշխած նախագահը: «Միտերանի տասնամյակը», ինչպես սիրում են նշել Ֆրանսիայի անցնող 10 տարիները, հատկանշվում են քաղաքական վերիվայրումներով:

Իրեն ընկերակցական (սոցիալիստ) նախագահ, Միտերանն իր կազմած առաջին կաբինետում ներտեսց համայնավար (կոմունիստ) 4 նախարարների, երկրորդական նշանակության պորտֆոլներ վստա-

Ալեք Քեշիշյանը ծնվել է Բելյուսում, 1964 թ. հուլիսի 30-ին: Չորս տարեկան էր, երբ ընտանիքը տեղափոխվեց Միացյալ Նահանգներ: Ալեքը մի տարի ուսանում է Սորբոնի համալսարանում, այնուհետև 1986-ին ավարտում Հարվարդի համալսարանը:

Հինգ տարեկանից սկսած դասեր է առնում Բոստոնի երաժշտանոցի մեջ: Այնուհետև դարձնում հիմնականում ռալտայի խումբ, հանդես գալիս Ամերիկյան մանկական բատրոնում, Բոստոնի Լիբիկական օպերայում երգում գլխավոր դերեր:

Հարվարդում ուսանում է բատրոնի, կինոյի, դերասանական և բեմադրական արվեստներ: Հարվարդից անցնում է Հոլիվուդ, ուր երգիչներ Բոբի Բրաունի, Վանեսա Ուիլյամսի, Էդդի Բրաունի և այլոց հետ նկարանկարում է տեսաձայնավորում:

Այսօր Քեշիշյանը Propaganda Film-ի տնօրենն է:


Հայրը՝ Գևորգ Քեշիշյանը ազգային և հասարակական գործիչ, Թեքեյան ճակատային միության Ամերիկայի և Կանադայի կենտրոնական վարչության ատենապետն է: Նաև ՀԲԸՄ կենտրոնական վարչության անդամ է:

Քույրը՝ Ալինը հույնական նվագիչ է արվեստին:

ընդհանուր հավասարակշռությունը անձնականի և ընդհանրականի, գրավիչի և վանդակականի, բացահայտի և անհետազնայի միջև: Կինոնկարը նույն պահին հակասական ազդեցություններ է բողոքում դիտողին տարրերով մի զգացումից մյուսը: «Վարակիչ զգայությունն է՝ կուպտություն, նասիրություն և վեհանձնություն, անմիջականություն և արհեստականություն», ինչպես գրում է «Նյուգուլթ» շաբաթաթերթը: Ամեն դեպքում, կինոնկարն ունի մի խանգարող կողմ, որ թերես գալիս է նրա կծու, վավաշտ, անսրող կողմից, ինչը քնական ու մարդկային է:

Հիմա, երբ գործն արդեն ավարտված է, Քեշիշյանն իսկական, պարկեշտ արվեստագետին հատուկ կասկած ունի. նա թշվառորեն զգում է իր գործի անավարտ լինելը: Արվեստում ավարտուն գործ չկա, կա միայն առավելագույն լավ ներկայացնելու տաղանդ, որի վկայությունն է Մադոննային նվիրված այս գործը: Ամեն դեպքում, ներքին անբավարարությունը և կատարելապաշտությունն է ամեն արվեստագետի, մանավանդ երիտասարդ արվեստագետի, հաջողության առաջին գրավականը:

Բեմադրիչը գործածել է բոլոր հնարքները առավելագույնի հասնելու համար:



ԵՐ ԻՏԱՍԱՐԴ ՏԱՂԱՆԴԻ ԾԱՅԼԱՏԱԿՈՒՄԸ

Ալեք Քեշիշյանի «Մադոննա»-ն

Մեյ Ուեսթի խառնուրդն է, մի քիչ էլ Մաունթ Գիորիլի, և իր մասին խոսելիս պարզապես ընդունում է, թե՛ «Ես մեծ երգիչ չեմ, ոչ էլ մեծ պարուհի»: Ուրեմն միայն սեքս սիմբոլ, որ լեզվական և պատկերային համարձակությամբ իր փառքն է կոփում:

Ալեք Քեշիշյանի համար իր «Մադոննան»... զնդեցիկ և տրամաբանական աղջիկ է, որ կորած է գերիրապաշտ աշխարհում (...). Նա սասած այն գերաստղը չէ՛, թե՛ր, հաղորդական և մարտնչող էակ է (...), նա կարող է ծնվել նրանց կողմից, որոնք գրում են, թե նրա բոլոր նախաձեռնությունները հաշվենկատ են: Ինձ համար նա նման է անցյալ սերունդների բոլոր մեծ արվեստագետներին. նա զորգում է իր պատգամը տարածելու համար: Կարծում է, թե մարդկանց կարող է օգնել փոխելու, համարձակ դառնալու, «ու սա իրեն թավաբարում է»:

Վեց ամիս առաջ Մադոննան անձամբ հեռաձայնում է Ալեք Քեշիշյանին, որ նա իր համերգային շրջապատում ներկայացնող վավերագրական ֆիլմ նկարահանի և պատրաստի: Առաջին ծանապարհորդությունը կատարվում է դեպի Ժապոնիա: Երբ երիտասարդ բեմադրիչը աչքի է անցկացնում համերգի նկարահանումները, մտածում է, թե իր դերը չի կարող սամանափակվել սուսկ համերգային շարքերից պատրաստված վավերագրականով: Նա ուզում է ներկայացնել ամբողջական Մադոննային՝ անսրող ամեն իմաստով: Ուզում է խուզարկել այն, ինչ թաքցված է հանդիսականներից և ժողովրդից, երգչուհու նախը կանգնած անձը, նրա հոգեբանությունը, առօրյան՝ իր ամբողջ վիճելի և ասարկելի, նաև համակրանք ներշնչող կողմերով:

Այս գաղափարի հետ Քեշիշյանը երգչուհուն է հանձնում նաև իր պայմանը՝ իրեն պետք է արվեստն անհատական ազատություն՝ իր նկարահանող երկու խումբով, կրկնակուս հետևելու երգչուհուն, լինի նա թմուռ, կուլիսներում թե ննջասենյակում: Ավելին, ոչ մի գրաքննություն չպետք է լինի աշխատանքի ժամանակ: Մադոննան ընդունում է պայմանը, թեև ավելի ուշ ասում է, թե Ալեքը «չափն անցնում է»:

Այս ձևով նկարահանվում է 250 ժամ տևողությամբ մի ֆիլմ, որ խմբագրությունից հետո դառնում է երկու ժամանոց «Ժշմարտություն և խիզախություն»-ը, որը պատկանում է իրականությունը քաղաքացույտող ճշմարիտ կինոյի դերայրոցին:

Կինոնկարը գունավոր է, երբ ներկայացնում է համերգները (45 րոպե) և հակասակը՝ սեւ-սպիտակ է դառնում, երբ պատկերում է մրտերին կամ առօրյա կյանքը:

Ի՞նչն է, որ նման վտանգաշատ գործը փերկեց գայթակցությունից կամ անհետաքրքրական, նույնիսկ խորշեցող կինոնկար լինելուց: Անընտ, ընդհանուր հավասարակշռությունը անձնականի և ընդհանրականի, գրավիչի և վանդակականի, բացահայտի և անհետազնայի միջև: Կինոնկարը նույն պահին հակասական ազդեցություններ է բողոքում դիտողին տարրերով մի զգացումից մյուսը: «Վարակիչ զգայությունն է՝ կուպտություն, նասիրություն և վեհանձնություն, անմիջականություն և արհեստականություն», ինչպես գրում է «Նյուգուլթ» շաբաթաթերթը: Ամեն դեպքում, կինոնկարն ունի մի խանգարող կողմ, որ թերես գալիս է նրա կծու, վավաշտ, անսրող կողմից, ինչը քնական ու մարդկային է:

Իր 250 ժամանոց փաստանկարներից Ալեք Քեշիշյանը մեզ անկասկած կարող էր ներկայացնել հակակրեյի և պարզունակ անձ: Սակայն այդպես հնարավոր կլիներ արդյոք ներկայացնել ճշմարտությունը, որ բեմադրիչի հետապնդած նպատակն էր: Նա կարող էր նաև շատ ավելի «համակրելի» և «զնդեցիկ» մեկին ներկայացնել, առանց կարիք զգալու, օրինակ,



Սուպերաստղ Ուոհայնջ ասոյի հետ

Կինոնկարի պատրաստման համար քոլոր աշխատողները հազել են սեւ զգեստ, որպեսզի մնան ստվերում: Նրանց արգելված էր նաև խոսել: Ստվեր դարձած, նրանք ստեղծել են այն պայմանները, որտեղ ժամեր, օրեր և ամիսներ շարունակ, անհասան ինքն իրեն առանձին է զգում, և ինչ որ ուզի նույնիսկ՝ ի վիճակի չի լինի «դերասանություն» անելու և ինքն իրեն կեղծ լույ-



Տեսարան ֆիլմից

հանդիսատեսին ցույց տալու Մադոննայի բացված կոկորդը՝ թշվառական քննության պահին, կամ այլ քնական, անպար պահներ: Այս ձևով «Ժշմարտությունը և խիզախությունը» դառնում է միջազգային կինոարվեստի մեջ առաջին գործը, որը ներկայացնում է արվեստագետի քննական և մտերմիկ կյանքը իր՝ արվեստագետի կատարմամբ: Մադոննային խաղում է Մադոննան:

«Մարդկային» Մադոննայի շնչով գիծ է ներկայացվում նրա ընտանեկան կապը, երբոր և հոր հետ նրա հարաբերությունները, մոր շիրիմին այցելությունը: Նրա մեկ ուրիշ արտահայտությունն էլ «մայրական» զգացումն է, երբ այդ երիտասարդ կինը «մայր հավի» նման հովանավորում է իր խմբի անձնակազմին՝ պարողներին ու երգողներին, և որանց հետ շրջա կազմած՝ աղոթում ամեն ներկայացումից առաջ: Քանզի իտալացի կաթոլիկ ընտանիքից սերած այս աղջիկը նաև հավատացյալ է, որ սակայն չի արտոնում եկեղեցուն և կրոնի միջամուկ լինել իր մտածումներին, գործին և վարքերարքին: Մադոննան այստեղ հակադրվում է Մերլին Մոնրոյին, որի անձնական կյանքին և թաքուն մտածումներին տեղյակ էին միայն մտերմները: Մադոննան չի ծածկում նաև, որ իր գործակից եղբայրը սեռական շեղումներ ունի, իսկ մյուսը՝ նոր է թշվելի ակոնոլամությունից:

«Իմ գործը, ասում է երգչուհին, «կոճակ տղմնն է, որպեսզի մարդիկ իրենց կարգապարտող պատշաճից դուրս գան և ընդունեն իրենց և ուրիշների վերաբերյալ մերկ ճշմարտությունները»:

Ալեք Քեշիշյանի այս գործը կարելի է համարել նաև սիրո արտահայտություն հանդեպ մեկի, որը հինգ տարի առաջ իրեն ներշնչել էր բեմադրելու իր առաջին օտոպերան, որպես Հարվարդի համալսարանի ավարտական:

«Ժշմարտությունը և խիզախությունը» որքանով է հարազատ «աստղի» իրական կյանքին, որքան է նաև դերասանական բաժինը այս ինքնամերկացման մեջ: Որքանով է Քեշիշյանը կարողացել տալ երիտասարդ կինը ամբողջական կերպարը, որն աշխարհում հավանաբար իրենով խանդավառ միլիոնավոր հիացողներ ունի: Այս հարցին կարելի է ուրիշ մի հարցով պատասխանել. ինչքանով կարելի է որևէ անձի ներկայացնել երկու ժամկա մեջ:

սր տակ ցույց տալու:

«Ինչքանով է յուրաքանչյուրիս կյանքը ձեռագրում մյուսի կյանքի վրա: Ինչքանով է մեր ամբողջ կյանքը դերասանություն», հարց է տալիս բեմադրիչը և ինքն էլ պատասխանում, «Իմ գործը ձեռագրելն էր, նրա (Մադոննայի) գործն էլ՝ ասելը»:

Այս ձևով, «Ժշմարտությունը և խիզախությունը» դարձել է ձեռագրված կյանքի հարազատ ժամանակագրությունը:

Մայիսի 8-ին, Նյու Յորքում, կինոնկարի պաշտոնական պրեմիերայի ժամանակ Միլիթանթս կինոթերևրության նախագահ Հարվի Ուայնթանը բեմից պաշտոնապես ողջունել է «Նոր աստղ» ժանրը: Այս ազիթով նա հիշել է կինոյի պատմությունը հյուստոլ մեծագույն բեմադրիչների անունները, ավելացնելով, որ առաջիկա տասնամյակներին Ալեքը իր դրոշմը պիտի դնի այդ պատմության վրա:

Երիտասարդ այս տաղանդը, իր առաջին երկարաշունչ ստեղծագործությունով ինքն էլ դարձավ մի «աստղ», ոչ թե նրա համար, որ գործածի «կաթոլ լծեց մի աստղ» ի արտահայտությունը, այլ որովհետև, ինչպես ֆրանսիացի ակնավոր գրող Անդրե Ժիդն է ասում «Երկրային սքանդալ»-ների մեջ, նա «կարեւորություն տրվեց իր նայվածքին, ոչ թե նայված առարկայի վրա»:

Ապագա մեծ հաջողությունների գրավական ունի Ալեք Քեշիշյանը: Կինոնկարությունների կողմից նրան արդեն ներկայացվել են 72 բեմանկութ, որպեսզի դրանից ֆիլմ նկարահանելու նյութ ընտրի: Նա առաջին իսկ օրից կարողացավ ընտրել, ինքնիրեն պարտադրել ու հարգել տալ, պայմաններ դնել, ստեղծագործական ծանր աշխատանքի լծվել, ու նաև ցույց տալ մի ուժեղ գիծ, որ քննադատում է նրա անձը, երբ նրան առաջարկում են փոխել անունը և ամերիկյան ավելի մատչելի անուն ընդունել, երիտասարդ հայր մերժում է ոչ միայն ի սեր ծնողներին և ընտանիքին, այլ նաև «պահելու համար իր ժառանգությունը»: Ավելի վաղ, նա ընտանիքում հայտնել էր, թե երբ անվանի դառնա, պիտի պահի հայկական անունը:

Ի վերջո, նկարագիրն է, որ դիմագծում է մարդուն, և մարդը արվեստագետին ու նրա ոճը:

ԳՐԻՂՈՐ ԶՅՈՍԵՅԱՆ

«Պայթյուն», մայիս 18, 1991

Ի՞նչ է անհրաժեշտ, որ արդիական երգի ու պարի աշխարհի «չուս թիզնեսի» մեջ «նոր» դառնաս, այսինքն՝ գրգռիչ, խառնիչ, գրավիչ և գայթակցեցող, պետք է որևէ բան անես Մադոննայի հետ, մի բան, որ նախապես երբեք ոչ ոք չի արել, և այն իսկապես լավ անես, ունենաս անուն, որ չան-ով է վերջանում...»:

Այսպես է բնորոշվում Մադոննային ներկրված վերջին կինոնկարը և նրա բեմադրիչ Ալեք Քեշիշյանը ամերիկյան ամենատարածված երկլարաթաթերթի՝ «Ռոլինգ Սթուն»-ի մեջ, որ տարվա «նոր» արվեստագետներին նվիրված իր մայիսի 16-ի բացահայտ համարում չորս էջ էր նվիրել նշանավոր «աստղ»-ից ավելի նշանավոր ներկայացնելու անհրաժեշտ շրջանակները իրենց լուսարձակն ուղղել են Ալեք Քեշիշյանի վրա. ու միջազգային մամուլը հետևում է դրան Հարավային Ամերիկայից մինչև Եվրոպական երկրները: Ամեն որ հարց է տալիս, թե ո՞վ է այս 26-ամյա տաղանդավոր բեմադրիչը, որ իր համարձակությամբ և նորարարությամբ, մի շարք կինոնկարատեսների կարծիքով, հիշեցնում է ճիշտ հիսուն տարի առաջ ամերիկյան հասարակությունը խռոված Օրսոն Ուելզին, երբ նա նրապարակ էր հանել այժմ դասական դարձած իր «Միլիզոն Քեյն» ժապավենը:

Կինոնկարը կոչվում է «Ժշմարտություն և խիզախություն. Մադոննայի հետ կապիտաններում և անկողնի մեջ»:

Եթե ֆիլմի անունը ինքնին քաղաքացույտում է նրա բոլորանկարությունը, չի քաղաքացույտում սակայն, թե ի՞նչն է նորն ու ուղադրվել այս ֆիլմի մեջ:

Կարծում ենք, հարկ չկա երկար ներկայացնել իր մասին շատ խոսել տվող «չուս թիզ» ժամանակակից արվեստագետների Մադոննային, որին կարելի է սիրել կամ չսիրել, պաշտել կամ անտեսել՝ ըստ տարրիքի, ճաշակի և այլ տրվյալների: Իրողություն է, սակայն, որ 32-ամյա այս կեղծ խարոյաչի անձը և համարվող տարածված է որքան Ամերիկայի, նույնքան էլ Ասիայի և Եվրոպայի մեջ և նրա յուրաքանչյուր բեմից հավաքում և մարգարաշտեր է լցնում իր երկրպագուների զանգվածները, նույն համեմատությամբ ասպնովելով այդ աղջկա նյութականը: Մադոննան՝ Մերլին Մոնրոյի ու



Հակաբեղմնավորման միջոցներ

30 տարի է անցել այն օրից, երբ Ամերիկայում դեղահաբեր առաջարկվեցին կանանց հղիությունը կանխելու նպատակով: Հակառակ դեղահաբերի միջոցով ձեռք բերված հաջողություններին, ամեն տարի արձանագրվել է 3 միլիոն հղիություն, իսկ հղիացած կանանց կեսը դիմել է արտօրի: Չնախատեսված հղիությունների պատճառը այն չէ, որ մարդիկ չգիտեն կանխե-

Table with 2 columns: Method and Percentage. Includes 'տղամարդիկ' (4.1), 'դեղահաբեր' (10.7), 'նախապահպանակ' (5.1), 'թասակ' (2.0), 'սեռական կյանքի կանոնավորում' (0.8), 'ներարգանդային միջոց' (0.7), 'քիմիական միջոց' (0.6), 'սպունգ' (0.4).

Հարուստը եւ աղքատը

ԱՄՆ-ի մի շարք նահանգներ, որտեղ կա բնական եւ պարզապես է տուրիզմը, 1990 թվականի բյուջեն ավարտել են շահութով, իսկ մնացածները պարտով:

Table with 2 columns: State and Revenue. Includes 'Նահանգ' (Revenue), 'Կալիֆոռնիա' (1 միլիարդ), 'Միչիգան' (979 միլիոն), 'Նյու Յորք' (900 միլիոն), 'Քոնեկտիկուտ' (562.5), 'Վիրջինիա' (550 միլիոն).

Table with 2 columns: State and Revenue. Includes 'Նահանգ' (Revenue), 'Ալյասկա' (500 միլիոն), 'Լուիզիանա' (400 միլիոն), 'Հավայան կղզ.' (200 միլիոն), 'Նեվադա' (95 միլիոն), 'Վաշինգտոն' (41.5 միլիոն).

Յուրենի անձրեւը

Մի ժամանակ Ռուսաստան էր ապահովում աշխարհի ցորենի մատակարարման կարեւոր մասը, այժմ պատկերը հակառակ է. հետեւյալ երկրները օգտւում են Խորհրդային Միությանը:

Table with 2 columns: Country and Percentage. Includes 'Գերմանիա' (960.5), 'Իտալիա' (90.0), 'ԱՄՆ' (83.2), 'Շվեյցարիա' (40.0), 'Հունգարիա' (32.2), 'Ֆրանսիա' (30.9), 'Իսրայել' (27.5), 'Ֆինլանդիա' (7.5), 'Լեհաստան' (0.4).

Հայ գրոսմայսթրի նոր հաջողությունը

64 վանդակաւոյ շաշկու խՍՀՄ բազմակի շեմպիոն երեւանցի գրոսմայսթր Վիտալի Գարրիբյանը գերազանց հաղթել է Նախկին Ամերիկայում տեղի ունեցած խՍՀՄ պիլմած ուժերի առաջնութիւնում: Եւ 15 հերթափոխի վաստակելով 12.5 միավոր, նվաճել շեմպիոնի կոչումը: Դա այս մարզանքի համար անշափ բարձր ցուցանիշ է:

Առաջնութիւնը մասնակցում էր երեւանցի եւս մեկ գրոսմայսթր, խՍՀՄ նախկին շեմպիոն Լեւոն Սայաթյանը, որը ժամանակին եղել է նաեւ խՍՀՄ պիլմած ուժերի շեմպիոն: Այս անգամ Հայաստանի բազմակի շեմպիոնը բավարարել է 5-րդ տեղով: Զուգահեռաբար իրենց հարաբերությունները պարզում էին նաեւ կանայք: Այստեղ էլ վերելքով հաղթել է կազմ մեր հանրապետության ներկայացուցիչը՝ Հայաստանի բազմակի շեմպիոնուհի, սպորտի վարպետ Լուսին Վարդանյանը, որը 15 հերթափոխի վաստակել է 13.5 միավոր եւ առաջին երեք տեղը բաժանել մոսկովայի Բուրուեայի եւ Լիմսիտագիլի վարյուխի-նայի հետ:

«Կոսայթ»-ի նահանգը շարունակվում է

«Կոսայթ»-ը ընթացիկ առաջնութիւնում արտագնա 6-րդ հանդիպումն անկախորէր եւ 6-րդ պարտությունը կրեց, այս անգամ Տիրասպոլում 0:3 հաշվով պիլմելով առաջատարին տեղի «Տրիդուլիս»: Վերջին 3 հանդիպումներում «Կոսայթ»-ը խփել է մեկ գոլակ, բայց թողել 8-ը, բոլորում էլ պիլմելով մրցակիցներին: Այսպէս մինչեւ 6-րդ:

ԽՍՀՄ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Table with 2 columns: Team and Score. Includes 'Մաաթին խումբ (հուլիսի 1-ի դրոյթյամբ)', '1. Տրիդուլ' (11 7 4 0 18-7 18), '2. Ռոտոր' (11 6 3 2 21-11 15), '3. Ռոստովմաշ' (11 6 3 2 13-5 15), '4. Լոմոսաոր' (11 6 3 2 11-6 15), '5. Տավրիա' (11 6 2 3 18-19 14), '6. Բուկովիս' (12 5 4 3 13-8 14), '7. Ուրալմաշ' (12 6 1 5 20-11 13), '8. Տեքստիլշիկ' (12 6 1 5 17-17 13), '9. Կայրաթ' (11 5 3 3 11-8 13), '10. Լոկոմոտիվ Լ.Ն.' (11 5 2 4 12-11 12), '11. Նեֆթչանիկ' (11 5 2 4 12-11 12), '12. Չելսի' (12 3 6 3 11-9 12), '13. Ղիսանու Սուխ.' (11 3 6 2 5-3 12), '14. Դինամո Սուխ.' (12 4 3 5 8-12 11), '15. Զակել' (11 4 2 5 12-19 10), '16. Զինիկ' (12 3 3 6 11-13 9), '17. Ղիսանու Սու.' (12 3 3 6 9-15 9), '18. Գեոլոգ' (11 3 2 6 6-10 8), '19. Նեֆթչի' (12 3 2 7 7-18 8), '20. Կոսայթ' (12 1 6 5 8-12 8), '21. Կուբան' (11 1 4 6 7-14 6), '22. Պարդաուզազ' (12 1 2 9 6-18 4).

Միտային մի դասնութիւն

Թորքական «Հյուրիչեք» բերքը ծանաճակ առ ծանաճակ անդրադառնում է քաղաքական հայանքի գործիչների անձնակազմը կանգնել, հասարակայնությանը ներկայացնելով նորանց սիրային արկածների պատմությունը: Թորքը մայիսի 18-ի համարում հատուկ տեղ է հատկացրել Մարիա Կալինինայի ու Գորբաչովի սիրային հարաբերություններին, նշել, որ այդ հարաբերությունները մեծապէս վնասում են Խորհրդային առաջնորդի ներդրումը: Չիր ուշադրութեամբ ենք ներկայացնում «Հյուրիչեք»-ի այդ կապակցութեամբ հրատարակված հոդվածը:

Հյուրիչեք, մայիսի 18. - Գորբաչովը գեղեցիկ սեռի ներկայացուցիչների մոտ քավականին սեքսուալ առաջնորդի համարում ունի: Խոսակցություններ կան այն մասին, որ Խորհրդային Միության գեղեցկութեան թագուհի Մարիան խելքահան է արել Գորբաչովին:

Վերջին շաբաթների ընթացքում մոսկովյան հասարակայնությունը գլխավորապէս զբաղված է ոչ թե հետզհետեւ աճող ինֆլացիայով ու գործազրկութեամբ, կամ էլ անդրկովկասյան հանրապետությունների փչող սառը բամբուկով, այլ 19-ը հազիվ քողորած գեղեցկուհի Մարիա Կալինինայի եւ Գորբաչովի սիրային հարաբերությունների մասին լայն տարածում գտած խոսակցություններով: Ինչպէս երևում է, Խորհրդային առաջնորդը շաբաթվա վերջին օրերը իր ամառանոցում անցկացնում է գեղեցկուհու հետ: Նման խոսակցությունների տարածումը տակնուվրա է արել Կրեմլը, միաժամանակ ծանր կացութեան մեջ գցելով «պերեստրոյկայի» ճարտարապետին:

Սկանդալային բնույթի այդ խոսակցությունները Մոսկվայից տեղափոխել են Արեւմուտք: Դա Արեւմուտքում շատերի կողմից մակնարանվում է որպէս «գլաստնութի» հնգանց: Իսկ մյուսներն էլ հակված են դրանք բացատրել Գորբաչովի հակառակորդների քաղաքական միտում հետապնդող բանասերկություններով:

Գեղեցկուհի Մարիա Կալինինան, շուրջ երեք տարի առաջ մասնակցելով Խորհրդային Միությունում գեղեցկութեան առաջին մրցույթին, «միսս Մոսկվա» էր ընտրվել:

Վերջերս նա գերմանական Quick հանդեսի հետ կապած հարցազրույցում Գորբաչովի մասին ասաց, որ «Նա հրաշալի անձնակազմ է, ես նրան շատ բան եմ պարտական: Առաջին անգամ, երբ լսեցի իմ



ու նրա մասին այդ կարգի խոսակցություններ, քիչ էր մտած լեզուս կուլ տայի»: Պատասխանելով մեկ այլ հարցի, Մարիան ասաց հետեւյալը. «Առաջնորդը երբեք չէր իր Ռախայով: Բայց ես ու Գորբաչովը... ի՞նչ հրաշալի կյանք»: Վերջում «Հյուրիչեք»-ը հրձվաբար նշում է, որ հիմա բոլոր անձանքները պատում են, թե ինչպիսին է լինելու Գորբաչովի կնոջ՝ Ռախայի վերաբերմունքը: Ը



լու միջոցները, այլ օգտագործվող միջոցների անհաջողակությունը:

Վերջերս, Միայնալ Նահանգների պետական մարմիններն ընդունել են մի նոր միջոց, որն օգտագործվում է բոլորովին նոր տեխնիկայով: Փոքր 6 դյույմեր ներմուծելով կանանց թեւի վերին մասի մաշկի տակ, կանխվում են հղիությունները 5 տարով համար: Այս մեթոդը դեղահաբերից եւ ստերոիդայինայից ավելի խնայողական է:

Այս դյույմերը չեն պարունակում նոր դեղեր, այլ միայն պրոկեստին (հակաբեղմնավորիչ հորմոն), որն օգտագործվում է նույն նշանակության դեղահաբերի մեջ:

Տեղային պայմաններում կարող է ընդունել հիվանդի արմուկի մոտ փոքր բացվածք է անում եւ վեց լույկու հատիկների նմանողությամբ պարկուճներ է տեղադրում մաշկի տակ, հովհարանան պատկերով: Դորմոնների ակտիվությունն սկսում է 24 ժամից: Արգանդի լորձաթաղանթի թանձրացումով կանխվում է ձվերի արտադրությունը եւ սպերմի մուտքը ձվարան:

Ապարատը վերադառնում է համար անհրաժեշտ է նույն բացվածքից դուրս հանել տեղադրված պարկուճները:

Նոր մեթոդի կողմնակի ազդեցություններն ունի գլխավորը՝ թեթեւակի արյունահոսություն է, որը կարելի է նկատել օգտագործողների մեկ երրորդի մոտ:

Բժիշկ Դանիել Միշելը հարավային Կալիֆոռնիայի համալսարանից, փորձեր է կատարել 1000 կանանց վրա, 1975 թվից սկսած: Նա ունեցել է հիվանդներ, որոնց մոտ այս պարկուճների տեղադրել է երրորդ կամպլեկտը, 11-12 տարիների ընթացքում:

Ենթադրվում է, որ Ամերիկայում մեծ հաջողություն կգտնի այս հակաբեղմնավորիչ միջոցը: Դրա տարածման օգնելու են միջազգային ֆոնդերը, որովհետեւ մի անգամից 500 ամերիկյան դոլլարի ծախսը ընդունելի չէ բոլորի կողմից:

Տարբերակների որոնում

Ամերիկայի 58 միլիոն երեխաբեր կանանցից 60 տոկոսը օգտագործում են հետեւյալ հակաբեղմնավորման միջոցները:

Table with 2 columns: Method and Percentage. Includes 'միլիոններով' (9.6), 'ստերոիդային կանայք'.

Հարմարություն 5-րդ տեղ

որ 20-րդ դարի վերջին տարիներին նախկին երկրներում համակարգի փոխարինելու է համապատասխան համակարգը: Ռաֆասանգալիս միաբնեւ համակարգը: Ռաֆասանգալիս տեսակետով, նոր համակարգում առճակատում պիտի տեղի տա համագործակցության:

Այդ տեսակետի բացահայտումը, նշում է «Նյու Յորք թայմս»-ը, վկայում է, որ Ռաֆասանգալիսի եւ նրա համախոհների հայեւս չի մտահոգում արմատականների հակակշիռ դիրքորոշումը, որոնք դեռեւս շարունակում են հակադրվել պրեպարատի վաճառվող քաղաքական ուղեգծին եւ վաճառվող քաղաքական ուղեգծին եւ վաճառվող քաղաքական ուղեգծին: Նոր համակարգում պիտի տեղի տա համագործակցության:

Իրանի ֆինանսների նախարար Մոհսեն Լուրդաբադի մի հարցազրույցի ժամանակ նշել է, թե համաձայն հնգամյա պլանի, 17 մլրդ դոլլարի արտասահմանյան վարկ է տրամադրվելու Իրանին: Բացի դրանից 10 մլրդ դոլլար նախատեսված է համատեղ նախագծերի իրականացման համար: Նոր նախագծերի իրականացման համար է բախշն ավելացրել է, որ Իրանը մտադիր է համագործակցելով պարզապես արդյունահանողական երկրների հետ: կայունացնել նախկին գները:

9. ՍՈՍԵՆՍԱՆ

Նամաշխարհային հուսքովի աստղեր


Անգլիական ֆեմիններ. Փոլ Գասկոյն



Մնվել է 1987 թ. մայիսի 27-ին Անգլիայի Գինթամի քաղաքում: Հասակը՝ 176 սմ, քաշը՝ 74 կգ.:

Խաղացել է «Ռեդինգ», «Նյուքասլ» քիմներում: Հիմա հանդես է գալիս «Տոտենհեմ» հանրաճայտ ակումբում: Անգլիայի հավաքականում անցկացրել է 19 խաղ, խփել 4 գոլակ:

Դեռ 23-ը չլրացած «Գազզան» (այդպիսի են ֆուտբոլիստներն անվանում Փոլ Գասկոյնին) ոչ միայն մեծ հռչակ է ձեռք բերում այլև դառնում է միլիոնատեր: Նր-



րան անգլիական ֆեմիններն են համարում, ինչպիսի «Քիթլը», կամ թելը:

«Գազզա» անունը դարձել է կոչիկների, հագուստների, մարզական համազգեստի ու իրերի, տարբեր խաղերի, տեսագրությունների եւ այլ իրերի թիզնա:

Գասկոյնի այսօրվա հասույթը գնահատվում է ավելի քան 12 մլիոն դոլլար: 1988 թ. հուլիսի 7-ին «Գազզան» դարձավ անգլիական ֆուտբոլի լեգենդ: Նա քրիտանական առաջին խաղացողն էր, որը «Նյուքասլից» «Տոտենհեմ» տեղափոխվելու համար ստացավ 2 մլիոն ֆունտ քուտլինգ:

16 տարեկան էր, երբ ընդգրկվեց «Նյուքասլ ծունայքեդ» քիմում, որը հանդես է գալիս առաջին դիվիզիոնում: 1985 թ. չնայած հազվադեպ, բայց ար-

դեն խաղում էր «Նյուքասլի» կազմում: Իսկ հաջորդ տարի իր խաղով այնպես փայլեց, որ դարձավ քիմի առաջատարը: Փոլ Գասկոյնին համաշխարհային մեծաքանակ ֆուտբոլիստ աստղ դարձրեց Անգլիայի հավաքականի գլխավոր մարզիչ Բորի Ռոբսոնը: Արդեն այդի տակ ունենալով «Գազզային», փորձառու մարզիչն այնուամենայնիվ արգելում է նրան մասնակցել 1988թ. Եվրոպայի առաջնության խաղերին: 12ամ տարեկան նրան տեսախցիկներից ու անձամանակ գովազդներից, Ռոբսոնը թողնում է, որ 20-ամյա ֆուտբոլիստը լիովին հասունանա ֆուտբոլային գերագույն ստուգանքի՝ աշխարհի հերթական առաջնության համար:

Իտալիա մեկնելուց առաջ Փոլ Գասկոյնը մասնակցեց ընդամենը 2 ընտրական խաղի՝ Ալբանիայի (մեկ գոլ) եւ Զվեդիայի դեմ:

Բայց աշխարհի առաջնությանը մասնակցելու ուղեգրի հարցը վերջնականապես որոշվեց 1990թ. ապրիլի 25-ին Լոնդոնում կայացած Չեխոսլովակիայի հավաքականի հետ ընկերական խաղից հետո: 90 րոպե թավական էր, հանգելու քողորին, որ Իտալիա մեկնելու իր թեմատիկայում կասկածից դուրս է: «Ռեմբլին» հրացած էր, «Ռեմբլին» հուզվում էր: Փոլ Գասկոյնը դարձավ մեկ գոլի եւ 3 արդյունավետ փոխանցման հեղինակ:

Աշխարհի առաջնությունում Փոլի հաջող խաղը նրան դարձրեց անգլիական աստղ: «Տոտենհեմի» ամեն մի խաղին մարզաւերները ներդրում են մարզադաշտը Գասկոյնին երկրպագելու համար: Նրա կատարողական վարպետությունը դարձել է անկրկնելի: Գնդակը խաղի ընթացքում կարծես թե ստանձնվում է նրա ոտքին: «Գազզայի» ամենագլխավոր քաղցրեղենը շատ է սիրում եւ չաղանալու հակում ունի: Դեռ «Նյուքասլում» խաղալու տարիներին մարզիչները նրան անշարժ քաշ էին պարտադրում եւ յուրաքանչյուր ավելորդ 400 գրամի դիմաց տուգանում էին մեկ ֆունտ քուտլինգով: «Գազզան» անկրկնելի է, չե-հոգնող, անդիմադրելի, անկայուն, ազդեցիկ, անհարթամարմին, անառիկ եւ հմայիչ:

Ս. ԲԱՐՈՍՍԱՐՅԱՆ

Իլմարս Բիշերս. «Քաղաքականությունը չդեռ է խառնել սնտուսթյան հետ»

Մտկվա 30 մայիսի 1991

Մտկվա 30 մայիսի 1991

Մայիսի 30-ին Մտկվայում լատվիական կառավարության մշտական ներկայացուցչության շենքում կայացավ Լատվիայի հանրապետության Նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Ի. Բիշերսի և Լեյնտանի կառավարության Լատվիայի ներքին գործերի նախարար Մանուս Արուտի-նի մամուլի ասուլիսը:

Ներկայացնելով մեկ շաբաթ առաջ տեղի ունեցած դեպքերի ընթացքը, Ի. Բիշերսը նշեց, որ դա կենտրոնի հերթական խաղ-րից մեկն է: Այն, նախնաառաջ, թելադրվում է տարվող քաղաքականությամբ: Լատվիայի ժողովուրդն անցած երկու տարվա ընթաց-քում ցույց տվեց, որ կողմնակից է անկա-խությանը: Սակայն կոմունիստական կու-սակցությունը, որի հիմքերը դեռևս կայուն են, բազմաթիվ փորձեր է արել կառավարա-կան հեղաշրջում կատարելու: Դրա վառ ա-պացույցն են նաև հունվարյան դեպքերը: Ուստի մեզ համար առաջնահերթ լիակա-տար անկախության հասնելն է, որը թույլ կտա վարելու ինքնուրույն քաղաքականու-թյուն: Դա ամենալին չի նշանակում, թե կլտրվեն տնտեսական, մշակութային, գի-տական կապերը: Ընդհակառակը, դրանք նոր բովանդակություն կատարեն: Մենք պատրաստ ենք փոխանակված տնտեսական հարաբերությունների: Դեռ չորս ամիս ա-ռաջ սկսված քաղաքականությունից շրջանակ-ներում կայացել է միայն մեկ հանդիպում: Երկրորդը, Մտկվայի մեղքով չկայացավ հինգ մայիսի 29-ին: Նախորդ օրը, ինչպես հայտնի է, եղել են 5 հարձակումներ սահ-մանամերձ մարտերի վրա: Օմնական-ները ոչ միայն հալածանքի են ենթարկվել մարտերի աշխատակիցներին, այլև ընտանիքներ են փաստաթղթեր, նյութական արժեքներ: Վառել են պանակակետներ, տնակներ: Ընդհանուր վնասը կազմել է 200 հազար ԵՄԴ: Փորձեր են արվել նաև ոչնչացնելու Լատվիական պառակալները, սակայն տեսնելով Լատվիացիների բավա-կանաչափ լավ զինվածությունը, օտնա-կանները խուսափել են բռնի գործողու-թյուններից և ետ են վերադարձել:

Սկզբում, ԽՍՀՄ ներքին գործերի նա-խարար Պոլոսն ժխտում էր կատարվածը, ասելով, թե ինքը տեղյակ չէ, իսկ հետո պարզվեց, որ ոչ միայն տեղյակ է, այլև

կատարված գործողությունները կրել են օ-րինական բնույթ: Լատվիական հանրապե-տության դատախազությունը քրեական գործ է հարուցել հարձակումներին մասնա-կցած օմնականների դեմ:

Մենք հանգում ենք այն եզրակացության, որ ինչ-որ ուժեր չեն ուզում, որ նորմալ կապեր հաստատվեն կենտրոնի և հանրա-պետությունների միջև, - նշեց փոխվարչա-պետը: Անդրադասնալով տնտեսական հար-ցերին, Լեյնտանի կառավարությունը հայտարարեց, որ կենտրոնը չի կարողա-նում տարրերը տնտեսական հարցերը քա-ղաքականացնել: Թեև, ինչպես նշեց նա, Լա-տվիան ձգտում է հարթել խաղըղտները և պատրաստ է մասնակցելու տնտեսական ծրագրերին: Մենք դրականորեն ենք գնա-հատում «9+1»-ի հայտարարությունը և այն «կարծիքին ենք, որ այդ փաստա-թուղթն ունի շատ կարևոր նշանակություն և ապահովում է անկախության գնացող հանրապետությունների իրավունքները: Այդ առումով արդեն հնչեցան են նաև շփում-ները կենտրոնի հետ:

«Ազգ»-ի այն հարցին, թե ինչպիսի՞ մակարդակի վրա են տնտեսական հարա-բերությունները մյուս ինքնիշխան հանրապե-տությունների հետ, նախարարը պատաս-խանեց, որ գրեթե բոլոր հանրապետու-թյունների հետ կնքվել են պայմանագրեր, որոնք հասցվել են ձեռնարկատերերի մա-կարդակին: Եւ նախորդ տարվա կնքած պայմանագրերը մեծ արդյունք են տվել: Փոխվարչապետ Բիշերսը ավելացրեց, որ թեև այդ պայմանագրերը կնքվել են կա-ռավարությունների մակարդակով, սակայն շատ տեղերում այն չի հասցվել ձեռնար-կություններին, Հայաստանի հետ նույնպես կնքվել է տնտեսական պայմանագիր: Վեր-ջում մամուլի ասուլիսի մասնակիցները ծա-նոթացան Լատվիայի Գերագույն խորհրդի նոտաին՝ ուղղված ԽՍՀՄ Գերագույն խոր-հրդին և պրեզիդենտ Գորբաչովին, որ-տեղ նշվել էր մեծ նշանակություն ունեցող գոր-ծերի նախարարության հատուկ նշանակու-թյունները և պահանջները: Ինչպես նաև նախարարության հատուկ նշանակու-թյուններից անհատապես ղուրս բերել այդ շո-կատները և պատժել մեղավորներին: Նո-տան ստացել է Գերագույն խորհրդի նա-խագահ Գորբաչովը: □

Միևսկի գործադուլային կոմիտեի անդամները և մարտավարությունը

Միևսկի քաղաքային գործադուլային կոմի-տեի մտադիր է քաղաքական և տնտեսական պայքարի իր ռազմավարությունը փոխել:

Այս մասին հայտարարեց Միևսկի գործա-դուլային կոմիտեի համանախագահ, Բելոռու-սիայի ժողպատգամավոր Սերգեյ Աստուշկիցը: Դա չորս փուլով, ըստ նրա, կլինի աշխատան-քը ձեռնարկություններում, աշխատանքային կոլեկտիվների մեջ: «Գործադուլային կոմի-տեի բանավորական ժամանակավոր կազմա-վորում է, որն անհրաժեշտ էր գործողու-թյունները կողորդիսպես և պատակով: Դի-մա եկել է ժամանակը ձեռնարկություններում ստեղծելու մշտական գործող բանվորական մարմիններ՝ արհմիությունների օրինակով»,- ասաց նա:

Դիմական պահանջները կման նախկին-ները: Մասնավորապես, աշխատավորական կոլեկտիվների պահանջով, շատ կուսկոմիտե-ներ արդեն դուրս են բերված ձեռնարկու-թյունների տարածքից:

Աստուշկիցը հաղորդեց, թե այժմ աշխա-տանքներ են ծավալվում Գերագույն խոր-հրդի նկատմամբ հասարակայնության վրս-տահության համաժողովրդական հարցում կազմակերպելու ուղղությամբ:

ԽՍՀՄ-ում ոչնչացվել են միջին հեռահարության հրթիռների արձակման հարմարանքներ

Ասյայլ երեքշաբթի, մայիսի 28-ին, Սա-րևա շրջանային մոտ գտնվող ռազմական քաղաքում (Ուլանսկի մարզ) ոչնչացվել է ԲՀ-10 տիպի հրթիռների (որոնք Արեւմուտ-քում ծառայել են SS-20 առևտով) արձակ-ման հարմարանքների վերջին խմբաքանակը:

Մարտական վիճակից հանվել են նաև այդ հրթիռների համար նշանակված քարշա-կները: Մամրիկյան դիտորդների ներկայությամբ, պլավատորնով կտրատվել են արձակման սարքերի մեխանիզմները և քարշակների հե-սերը, առանց որի անհնար է դրանց տե-ղափոխումն ու հրթիռների արձակումը: Քար-շակները կտտանան տր շանակում՝ աշխա-տելով խաղող կատակների համար: Նրանց հիմքի վրա պատրաստվելու են 100 տոն-նային ավելի բեռնարձակության կոուկներ:

Բելոռուսիայում ստեղծ-վում է սովետային կարիներ

Բելոռուսիայի ժողպատգամավոր Լեոնիդ Բորչեյսկին հաղորդեց, որ հանրապետության խորհրդարանում եղած ընդդիմադիրները գոր-ծուն կերպով ստեղծում են սովետային կա-

րիներ: Նման կարիների հղացքն արդեն մշակվել է, ավելացրեց պատգամավորը, հաղեց գա-լով Միևսկի գործադուլային կոմիտեի հեր-թական նիստի ժամանակ, ուր իր հետ հե-րավիրվել էին ընդդիմադիր այլ պատգա-մավորներ ես:

Պատգամավորները մատնաշեղքին, որ Բե-լոռուսիայի Գերագույն խորհրդի ներկայիս տեղի ունեցող նստաշրջանի գլխավոր հար-ցերից մեկը՝ պրեզիդենտի պաշտոնի հաս-տատումն է:

«Կոմունիստական մեծամասնությունը, - ասաց Լեոնիդ Բորչեյսկին, - ծրագրում է պրեզիդենտ ընտրել հաջորդ նստաշրջանի ժամանակ: Ընդդիմադրության կարծիքով, պրեզիդենտը պետք է ընտրվի համաժողովը-րդական զվեարկությանը, հանրապետության Սահմանադրության ընդունումից հետո»: Բո-րչեյսկին ընդգծեց, որ ընդդիմադրությունը դարձյալ իր հույսը կապում է բանվորական շարժման աջակցության հետ:

Խլամական մշակույթի կենտրոն Մոսկվայում

Դուկիսի 6-ին Մոսկվայում կատարվելու է Իսլամական մշակույթի կենտրոնի բացումը: Այն կատարվելու է Մոսկվայի Կիևոյի տանը: Այս մասին հայտարարեց ԽՍՀՄ-ի կո-րդիխատոր Արդյուվաիդի Լիլայովը: Արա-րողությանը մասնակցելու հրավերներ են հղվել մուսուլմանական երկրների դեսպա-ններին, հասարակական գործիչներին, այդ թվում՝ միութենական և օուսաստանյան խորհրդարանների պատգամավորներին, Մոս-խորհրդի անդամներին, ԽՍՀՄ մշակութային ֆոնդի և այլ կազմակերպությունների ներ-կայացուցիչներին:

ԽՍՀՄ-ն Մոսխորիդի կողմից պաշտոնապես գրանցվել է 1991 թ. ապրիլին:

Նոր գլխավոր հյուրասուներ Կիևում

Առաջին անգամ Կիևում նշանակված գլխավոր հյուպատոսներին պաշտոնապես գործելու իրավունքի շնորհման արարողու-թյունը կատարվեց ոչ թե Մոսկվայում, այլ Ուկրաինայի մայրաքաղաք Կիևում:


Մայիսի 29-ին, Ուկրաինայի արտաքին գործոց նախարար Անտոն Չելենկոն արտո-նագրեր շնորհեց Մոսկվայի և Զեխտուլ-վակիայի գլխավոր հյուպատոսներին, համա-պատասխանաբար Ցաղմագին Թաշնյամին և Որբերտ Գարենչարին:

Ուկրաինայի արտգործնախարարությունում «ԻՃ»-ի թղթակցին հայտնեցին, թե գլխավոր հյուպատոսների թեկնածությունը նախապես արժանացել էր Միությանական արտգործնա-խարարության հավանությանը, իսկ հանրա-պետական արտաքին գործոց քաղաքական վարչության կողմից գլխավոր հյուպատոս-ների ընդունելությունը ուղղակի ձեւական բնույթ էր կրում: □

Ամբաղնդվում է կայունությունը Լիբանանում

Լիբանանյան քանակը, «Մեծ Բեյրութ» ծրագրի հաջող կատարումից հետո, որի ըն-թացում պիսյալ ջրկատները հեռավայրեքի մայրաքաղաքի և արվարձաններից, վերջերս իր դիրքերն ամրապնդեց լեռնային շրջաննե-րում, վերականգնվեց անարգելները, այդպի-սով վստահության են ապահովության մթնո-լորտ ստեղծելով քաղաքայինների մոտ:

16 տարի տեւած եղբայրասպան պատե-րազմից հետո առաջին անգամ ջրիստու-յաներն ու իսլամները սկսեցին ապաստիտ



շրջագայել նախապես հակամարտ շրջաննե-րում, առանց սպանվելու կամ առեւտնակվելու վախի: Այդ բանը ավելի եւս ամրապնդեց այն քանակը հետո, երբ պիսյալ գլխավոր ջո-կատներն իրենց համաձայնությունը տվեցին վայր դնելու զենքերը:

Լեռնային ու ծովեզրյա մայրուղիներն այ- ժմ վերահսկում են միայն բանակայինները, որոնք ստուգման կետեր են դրել տարբեր տեղերում: Դավեյալ ուժեր ուղարկվեցին Շուֆի լեռների դուրսի գյուղերը, որտեղ բա- նակայինները հաստատեցին պաշտպանական դիրքեր: Բանակային ստորաբաժանները շրջում են նաև Բաթրունի, Ջուրայի, Ջես-րուանի և Ջիբեյլի շրջաններում:

«Լիբանանյան ուժեր»-ի հրամանատար Սամիր ժաւածան, ջրիստույնա ուժեղագույն պիսյալ խմբավորման պետը, ներողություն խնդրեց ջրիստույններից, իր պիսյալների կողմից պատճառված վնասների համար:

«Օրենքն է այժմ փոխարինում պեքի տիրապետությանը», հայտարարեց վարչա-պետ Օմար Ջարամն, միև խորհրդարանի նախագահ Դուսեյն Դուսեյնի խոստացավ այլևս երբեք չվերադառնալ բեռնությանը: Այսուհանդերձ, պիսյալ խմբավորումնե-րը, որոնք խոստացել էին հանձնել զենքերը և իրոք հանձնել էին դրանք մի մասը, կարծում է, որ ծանր հրետանու և պիսա-մթերի մեծ մասը պահել են: Ընդհանուր կարծիքն այն է, որ նրանք այդ պիսամթեր-քը վաճառելու են երրորդ աշխարհի երկրնե-րին: Ըստ հավաստի աղբյուրների, «Լիբա-նանյան ուժերն իրենց պիսամթերի մեծ մասը արդեն իսկ վաճառել են Սուդանին և Սոմալիին, միևնույն ժամանակ փոխա-րեն»: □

Կառավարությունը ցարդ չի արտահայտ-վել, թե ինչպես է վարվելու քաղաքայինների մոտ գտնվող մեծաքանակ զենքերի կապա-կությունը: Դրանք քանակն այնքան մեծ է, որ հնարավոր չէ հավաքել:

Լուրեր՝ Intefax և սով. թղթակցների

Խորհրդային հրամանատարությունը լիսվացիներից առկազին է դառնում

Մեր սեռական թղթակցի Գայանն Աբրիկյանը տեղեկացավ Լիսվայից

Մայիսի 29-ին Վ. Լանգսթրեյդը ԽՍՀՄ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Մոյի-սենից ստացավ հեռագիր, որում գրված էր. «Եթե Լիսվայի գորակոչիկները չգնան ծա-ռայելու խորհրդային բանակում, ապա Լիսվան պարտավոր է տուրք վճարելու, հակառակ դեպքում ԽՍՀՄ զինված ուժերը կդիմեն այլ միջոցների»:

Մայիսի 31-ին երեք մերձալայյան հանրապետությունների Գերագույն խորհուրդների նա-խագահները մեկնեցին Բրյուսել, մասնակցելու Բելգիայի, Հոլանդիայի և Լյուքսեմբուրգի միջպառլամենտական խորհրդի լիակազմ նիստին: Բնաբովելու են Բալթիական հանրապե-տությունների և այդ երեք պետությունների համագործակցելու հնարավորությունները: □

Համաշխարհային անգրաճանաչությունը չնչին նվազում է ադրում

ՄԱԿ, 14-ը մայիսի.- Առաջին անգամ, աշխարհում անգրաճանաչների թիվն անըն-շան անկում է ապրել վերջին տարիներին: Այս մասին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից պատ-րաստված մի տեղեկագրում նշվում է, որ անգրաճանաչների թիվը 1990-ին կազմել էր 942 միլիոն մարդ՝ 1985 թ. 950-ի փոխարեն: Անգրաճանաչների թվի նվազու-մը, զեղեցիկ մի գույզադիտությամբ, համըն-կնում է Գրաճանաչության համաշխարհա-յին տարվա հետ, որը կարող է անգրաճա-նաչության դեմ պայքարի անկյունադար-ձային տարի համարվել:

Անգրաճանաչների թիվը կազմում է աշ-խարհի բնակչության 25,6 տոկոսը, և եթե այժմյան դրական միտումները շարունակ-վեն, սպասվում է, որ մինչև 2000 թվա-կանը անգրաճանաչների թիվը կիջնի 935 միլիոնի, կամ 21,8 տոկոսի: Տեղեկագիրը, նշելով անգրաճանաչների թվի հասմանտա-կան անկումը, 1970 թվին 890 միլիոն, կամ 38,5 տոկոս չափաբազմ բնակչություն, միևնույն ժամանակ մատնանշում է, որ անգրաճանաչության վերացման ուղղու-թյամբ արձանագրված առաջադիմությունը «քաղաքային դանդաղ» է ընթանում: Տեղեկագրում նշվում է, թե Գրաճանաչու-

թյան միջազգային տարվա դրական անդ-րադարձներից է եղել արդյունաբերական երկրներում գործառնական անգրաճանաչու-թյան ընթացման քարձրացումը, որտեղ հա-ճախ անգրաճանաչությունը տատանվում է 10-ից 20 տոկոսի միջև: Մրա արդյունքը եղավ այն, որ պատրաստվեցին պորտլեմը լուծելու ծրագրեր, իսկ արդյունաբերական երկրներն էլ իրենց պատրաստակամությու-նը հայտնեցին օգնելու աղքատ երկրներին:

Այնուամենայնիվ, ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի, սա բոլոր երկրների համար լուծում չէ. քա-նի որ «մի երկրում, որտեղ տղամարդկանց 50 տոկոսը և կանանց 80 տոկոսը անգր-րաճանաչ են, հարցն այն հարթահարելու գիտակցության մեջ չպետք է կայանա», այլ ըստ տեղեկագրի՝ «գործն է կարևորը և այդ գործը պահանջում է, աղքատ եր-կրների համար, արտաքին աջակցություն, ինչպես նաև ազգային հանձնառություն»:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից օժանդակություն ստացող փորձերից մեկն էլ գյուղական մամուլն է, քանի որ ըստ տեղեկագրի, «գրաճանաչությունը մեծ իմաստ չունի և քիչ է փնտրվում այնպիսի հասարակությու-նում, որտեղ մամուլն ու ընթերցանությունը տարածված չեն»: □